ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԹԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«02» 06 2022թ.
№ 29/01-170

ք.Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. վարչական շենք
հեռ. /011/51-82-82, davtashen@yerevan. am

«ԷԹԵՐՆԱԼ ՀՈՄ ՍՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ք. Երևան, Գարեգին Նժդեհի 30/3 շ., 32 բն.

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԷԹԵՐՆԱԼ ՀՈՄ ՍՍ» ՍՊ ընկերության միջև 2021 թվականի հունիսի 1-ին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/70-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Դավթաշեն 2-րդ թաղամաս 17, 18, 19 շենքերի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նույն պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է ՝ համաձայն N 2-ի Հավելվածի:

Ընկերության կողմից խախտվել է N 2 Հավելվածով աշխատանքների կատարման սահմանված ժամկետը:

Հիմք ընդունելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/70-1» գնման պայմանագրի 8.8 կետը և Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի 27.12.2021 թվականի թիվ 29/01-164768 գրությունը, 2021 թվականի դեկտեմբերի 28-ին կողմերի միջև կնքվել է «01.06.2021թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/70-1 գնման պայմանագրի N 1 Համաձայնագիրը», որի 1.1 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի Դավթաշեն 2-րդ թաղամաս 17, 18, 19 շենքերի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետը ավելացվել է 30 օրացուցային օրով:

Ընկերության կողմից Համաձայնագրով նախատեսված ժամկետը ևս խախտվել է:

Համաձայն պայմանագրի 6.1 կետի ՝ Կապալառուն պատասխանատվություն է կրում աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները, եթե. Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Համաձայն 6.2 կետի՝ սույն պայմանագրով նախատեսված աշխատանքի ժամկետը խախտելու դեպքում, Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

Համաձայն 6.3 կետի՝ 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷԹԵՐՆԱԼ ՀՈՄ ՍՍ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/70-1» գնման պայմանագիրը լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՌՈՄԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Իրավաբանական բաժին
Կատարող Մ.Խաչիկյան, հեռ.011518283